ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
գ. Գայ , Ա. Խաչատրյան-1

01 հունիսի 2024

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի փոքրիկներ, ջերմորեն շնորհավորում եմ երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:
Մաղթում եմ, որ խաղաղությունն ու երջանկությունը լինեն ձեր մշտական ուղեկիցը, շրջապատված լինեք անհուն սիրով ու հոգատարությամբ:
Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել մեր կողքին ապրող այն մանուկներին, ում ամեն օրը պայքար է՝ լիարժեք ապրելու համար: Մեզանից յուրաքանչյուրի առաքելությունն է աջակցել ու սատար կանգնել նրանց, որպեսզի իրականություն դառնան նրանց բոլոր երազանքներն ու նպատակները:
Թող որ առողջ, պաշտպանված ու սիրված լինեն աշխարհի բոլոր մանուկները:
Հարգելի՛ ծնողներ, շնորհավորում եմ նաև ձեզ, քանզի ձեր ուսերին է դրված մանուկներին ընտանեկան ջերմությամբ շրջապատելու, արժանապատիվ սերունդ դաստիարակելու առաքելությունը:
Արաքս համայնքում իրականացվող գրեթե բոլոր ծրագրերի հիմքում դրված է մեկ նպատակ. ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմաններն ու նախադրյալները, որպեսզի մեր մանուկներն ունենան բարեկեցիկ և անհոգ կյանք:
Կրկին շնորհավորելով տոնի առթիվ՝ խաղաղ երկինք ու անհոգ մանկություն եմ մաղթում ձեզ, փոքրի՛կ բարեկամներ:
Շնորհավոր Հունիսի 1…

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ